

ՔՈՆՏՈԼԵՍԱ ՌԱՅՍ
ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԵՋ

ՄՈՍԿՈՒԱ, 25 (ՌՈՅԹԸՐԶ)։— Մ. Նահանգներու ազգային ապահովության խորհրդատու Քոնտոլեսա Ռայս Չորեքշաբթի օր Մոսկուա հասած է՝ Ռուսիոյ հետ գէնքերը հակալիբի տակ առնելու հարցով րա-նակցութիւններուն թափ տալու նպատակով։ Ան ըսած է, թէ երկու կողմերը հրթիռային պաշտպանու-թեան հարցով ստեղծուած անել կացութիւնը յաղթա-հարած են։

Ռայս, որ Ուրբախայէն Ռուսիա մեկնած է, Ռու-սիոյ ապահովութեան խորհուրդի քարտուղար Վլա-տիմիր Ռուշայոյի յայտնած է, թէ ուրախ է Մոսկուա գտնուելուն համար, յատկապէս «մեր երկու նախա-գահներուն միջև տեղի ունեցած շատ յաջող երկրորդ հանդիպումէն ետք»։

Ռայս նախագահ Վլադիմիր Փութինի հետ տեսակ-ցութիւն պիտի ունենայ Հինգշաբթի օր (այսօր)։

ԹՈՒՐԵԻԱ

ԵՐԵՍՓՈՒՆԱՆԻ ՄԸ
ԱՆՁԵՌՆՄԻՆԵԼԻՈՒԹԵԱՆ ՀԱՐՅԸ
ԴԱՐՁԵԱԼ ԿԸ ԳՐԱԻՒ
ԼՈՒՍԱՐՁԱԿՆԵՐԸ

ԱՆԿԱՐԱ, 25 (ՌՈՅԹԸՐԶ)։— Թուրք երեսփո-խան Սեմա Փիսքինսուր Չորեքշաբթի օր յայտ-նած է, թէ իր անձեռնմխելիութիւնը ջնջելու դա-տախապներու պահանջը պիտի ետ պիտի չկեցը-նէ իր արշաւէն՝ Թուրքիոյ մարդկային իրաւանց մարզը քարէլաւելու համար։

Փիսքինսուր, որ վարչապետ Պիլէքը Էճէւի-թի Ժողովրդավար Ձախ կուսակցութեան ան-դամ է, կը դիմագրաւէ «ոճրագործներու օժան-դակած ըլլալու» ամբաստանութիւն մը, որով-հետեւ ան մերժած է հրապարակել անունները անոնց՝ որոնք ըսած են, թէ ոստիկանատունե-րու եւ բանտերու մէջ շարշարանքներու են-թարկուած են։

Երեսփոխանը հարցաքննած է մարդիկը՝ խորհրդարանական մարդկային իրաւանց յանձնախումբի մը կողմէ ոստիկանատուններու շուրջ քննութիւններու ընթացքին։ Աւելի քան տարի մը առաջ, ինք ատենապետը եղած է նշեալ յանձնախումբին։

Ան ըսած է, թէ քննութիւնը իր անունով չէ որ կատարած է, այլ՝ խորհրդարանին։ Ան կրնայ ատենա մը դիմագրաւել եթէ խորհրդարանը իր անձեռնմխելիութիւնը ջնջէ։

Թուրքիոյ մարդկային իրաւանց մարզը մէկն է բազմաթիւ խոչընդոտներէ, զորս անիկա կը դիմագրաւէ Եւրոպական Միութեան անդամակ-ցելու իր ճիգերուն ծիրէն ներս։

Փիսքինսուր ըսած է, թէ խորհրդարանական յանձնախումբը շուրջ 8500 ձերբակալեալներ եւ բանտարկեալներ հարցաքննած է եւ միաձայ-նութեամբ համաձայնած է անոնց ինքնութիւն-ները չյայտնել։

Երեսփոխանը յայտնած է, թէ կ'ուզէ որ խորհրդարանական իր անձեռնմխելիութիւնը ջնջուի, որպէսզի կարելի ըլլայ հարցը դատա-րանին մէջ եւ հրապարակաւ քննարկել։

Թուրքիա կը խոստովանի, որ ապահովու-թեան ուժեր երբեմն չարշարանքներու կը դի-մեն ձերբակալեալներու եւ բանտարկեալներու դէմ, սակայն անիկա կ'ըսէ, թէ անոնք «պիսթե-մաթիք» կերպով տեղի չեն ունենար։

ԻՐԱՔ ՊԻՏԻ ԱԵԼՑՆԵ ԹՈՒՐԵԻՈՅ
ԿԱԶԻ ԸԱՅԹԱՅԹՈՒՄԸ

Իրաք Չորեքշաբթի օր յայտնած է, թէ Թուրքիոյ կապի իր հայ-թայթումները պիտի աւելցնէ, հաղորդած է իրաքեան «ԻՆՆ» լրա-տու գործակալու-թիւնը։

Մէքերելով Իրաքի քարիւղի նախարար Ամիր Մոհամէտ Ռաշի-տը, անիկա ըսած է, թէ Իրաք պատրաստ է անմիջապէս իսկ Թուրքիոյ կապ հայթա-թելու՝ «շատ աւելի մեծ համեմատութիւննե-րով, քան ինչ որ Իրաք ներկայիս կ'արտադ-րէ»։

Ռաշիտ ըսած է, թէ Թուրքիոյ ուժանիւթի մարզին եւ Թուրքիոյ տնտեսութեան վերա-կառուցումը ուշացու-ցած են կապտար խո-ղովակի մը շինու-թիւնը՝ իրաքեան կապ արտածելու համար դէպի ձկնիսան նաւա-հանգիստը։

«Ծրագիրը գործադ-րութեան դնելու հա-մար սեղանին վրայ պի-տի սկսի կարելի եղա-ծին չափ շուտ»։ ըսած է ան։

Իրաք եւ Թուրքիա

1997ին նախնական համաձայնագիր մը կնքած են կապտար խողովակ մը կառուցե-լու համար, տարեկան 10 միլիար խորանարդ մէթր կարողականու-թեամբ։

Ռաշիտ ըսած է, որ երկու կողմերը համա-ձայնած են նաեւ «կա-րելի եղածին չափ շուտ» սահմանային երկրորդ անցք մը բա-նալու։

Ռաշիտ Թուրքիա կը գտնուի առեւտուրի գծով ետօրեայ շարք մը ժողովներու համար։

ԻՐԱՆ ԵՄ ՊԱՏՐԱՍՏ Է
ԹՈՒՐԵԻՈՅ ԿԱԶ
ԸԱՅԹԱՅԹԵԼՈՒ

Միւս կողմէ, Իրան-եան Կապի Ազգային Ընկերութիւնը Չորեք-շաբթի օր պատրաս-տակամութիւն յայտ-նած է այս ամուռնի վերջերէն սկսեալ Թուրքիոյ կապ արտա-ծել սկսելու, թրքական քարիւղատար եւ կա-պտար խողովակնե-րու «Պրթաս» պետա-կան ընկերութեան հետ 1996ին գոյացած

համաձայնութեան մը հիման վրայ։

Իրանեան ընկերու-թիւնը հաղորդագրու-թեան մը մէջ յայտնած է, որ նշեալ ծրագիրին կապուած թեքնիք բո-լոր հարցերը լիովին լուծուած են՝ «իբրեւ արդիւնք երկու ընկե-րութիւններուն միջեւ սերտ գործակցու-թեան»։

Իրանեան ընկերու-թեան տնօրէններէն Համտոլլա Մոհամէտ - Նեճատ նախապէս ըսած է, որ Իրանի հիւ-սիսարեւմտեան Թաւ-րիկ քաղաքէն Թուր-քիոյ հետ սահմանին վրայ գտնուող Պա-լարկան ուղղուող 255 քմ. երկարութեամբ խողովակին կառու-ցումը աւարտած է։

Պաշտօնատարներ յայտնած են, թէ Իրան համաձայնած է սկսե-լու համար Թուրքիոյ տարեկան 3 միլիար խորանարդ մէթր կապ հալթայթել, մինչեւ 2007 պայմ 10 միլիար խորանարդ մէթրի հասցնելով։

(ՌՈՅԹԸՐԶ)

ԻՆՏՈՒԵՋԻՒ

ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՅԸ
ԿԸ ՄԵԿՆԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՅԱՆԳՆԵՐ



Ուահիտ

ՃԱՔԱՐԹԱ, 25 (ՌՈՅԹԸՐԶ)։— Ինտունեգիոյ նախ-կին նախագահ Ապտուռահման Ուահիտ, որ կը մերժէ թէ պաշտօնագրիւցեալ քանի մը օր առաջ, վերջա-պէս այսօր կը լքէ նախագահական ապարանքը եւ կը մեկնի Միացեալ Նահանգներ, ուր պիտի ենթարկուի բժշկական քննութեանց։

Ինտունեգիոյ խորհրդարանը պաշտօնագրիկեց Ուա-հիտը անկարողութեան համար եւ անոր փոխարէն նախագահ ընտրեց Մեկաուաթի Սուքարնոփութին, շարթթակիզրին։

Միւս կողմէ, Ռահման յաջողութիւն կը մաղթէ իր յաջորդին, յուսալով, որ ան երկիրին վիճակը կը բա-րելաւէ։

Ուահիտ մերժած էր ընդունիլ պաշտօնագրիւմը եւ դուրս չէր գար նախագահական պալատէն, սա-կայն աւելի ուշ ան հրաժարեցաւ իր հակառակութե-նէն եւ այսօր կը լքէ պալատը ու կը մեկնի Պաթիմոր (Մ. Ն.), ձոն Հոփքինգ հիւանդանոցին մէջ ենթար-կուելու բնդհանուր քննութեանց։

ՄԱԿԵՂՈՒՆԻ

ԼԱՐՈՒԱԾ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ
ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Մակեդոնիոյ մէջ խիստ յարուած կացութիւնը կը շարունակուի։ Ծագուածով ալպանացի զինեալները երէկ որեւէ տրամադրութիւն չէին ցուցարբեր թե-թոփօ քաղաքին վերեւ գտնուող մէկ ճամբայէն քաշ-ւելու, հակառակ կառավարական ուժերուն կողմէ յարձակումի ձեռնարկելու եւ մայրաքաղաք Սքո-փիէի մէջ խռովութիւններու սպառնալիքներուն։

Արեւմուտքի զիւանդէտներ կը փորձէին ամէն գնով բանակցութեանց ճամբով համոզել Ազգային Ազատագրութեան Բանակի զինեալները, որպէսզի հեռանան լեռնային գիւղերէն, ուրկէ մակեդոնացի քաղաքացիները խոյս տուած են, յայտնելով, որ չրջա-նը համայնքային ընդթի մաքրագործումի կ'ենթար-կուի ծագումով ալպանացի զինեալներուն կողմէ։

Մակեդոնիոյ ներքին եւ պաշտպանութեան նախա-րարները ըսած են զիւզացիներուն, որոնք Երեքշաբ-թի օր Սքոփիէի մէջ գալլացած բողոքներու ձեռնար-կած էին, թէ ըմբոստներուն մինչեւ կէսօր ժամկէտ տրուած է քաղցուելու, որպէսզի քաղաքայինները կա-րենան վերադառնալ։

Յունաստան երէկ ծագումով ալպանացի ծայրա-յեղականները ամբաստանած է Մակեդոնիոյ կառա-վարութեան հետ գոյացած զինադուլը խզելու յան-ցանքով։

(ՌՈՅԹԸՐԶ)

ՀԱԿՈՒՄ

ԼԻԶՊՈՆԻ ՀԻՆԳՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ
ՅԻՇԱՏԱԿԻՆ

Կազմակերպութեամբ՝
Հ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Կը բանախօսէ՝
ԸՆԿԵՐ ԶՐԻՍՏ ԼԻՊԱՐԵԱՆ

Խօսք կ'առնէ՝
ԸՆԿ. ՄԵՐ ԱԵՏԻՍԵԱՆ
(Անդամ՝ Արցախի Հ. Յ. Դ. Երիտասարդական Միութեան Կեդրոնական Վարչութեան)

Տեղի կ'ունենայ այսօր՝ Հինգշաբթի, 26 Յուլիս 2001, երեկոյեան ժամը 8:00էն սկսեալ, Պուրձ Համուտի Ազգային գերեզմանատան մէջ։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻԲ

Լեւոն եւ Նայիրի Սիբայէեան եւ զաւակները շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ եւ այլապէս, մասնակից եղան իրենց դստեր ու քրոջ ԹԱԼԻՆ ՄԻԷԱՅԵԼԵԱՆԻ վաղահաս մահուան սու-գին։

Անոր յիշատակը վառ պահելու համար, հաւ-տատուած է «ԹԱԼԻՆ ՄԻԷԱՅԵԼԵԱՆ» ֆոնտը։ Բոլոր անոնք, որոնք կուզեն նպաստել սոյն ֆոնտին, հաճին հեռաձայնել 03 - 636629 թիւին։



NARRA TRADING

& GENERAL SERVICES CO. S.A.R.L.

ՆԱՐԱ ԹՐԵՅՏԻՆԿ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ս.Պ.Ը.

(Մեփականատը՝ Վաիէ Մանուշակեան)

**ՎԻԵԹՆԱՄԵՆ ԵԹՈՎՊԻԱՅԵՆ ՍՐԻ ԼԱՆԶԱՅԵՆ ԵՒ
ՖԻԼԻՓԻՆԵՆ ՍՊԱՍՈՒԷԻՆԵՐՈՒ ԱՊԱՆՈՎՈՒՄ**

- Անմիջական յանձնում եւ ապահովագրութիւն։
- Մեր նշանաբանը՝ անկեղծութիւն, ապահովութիւն,
- Մասնաւոր գինք, վաճարման դիրքութիւն եւ երկար տարիներու փորձառութիւն։

Պաուլիքի, City Hospital հիւանդանոցի փողոց, «Սեքըր Պարպար» (4), «Էնլի» Պրամատան շէնք, 4րդ յարկ։ Հեռ. 03/324799 եւ 01/897633



ՀՐԱՇԱԼԻ ՆՈՐ ԷՐՔՈՆՏԻՍԻՈՆԵ

AUTO RESTART

Իսկական ուժ

Բոլորին մատչելի գինք

Ճափոնական արիւստագիտութիւն

9000ԵՆ 24000 BTU

Պատին, գետնին կամ առաստաղին վրայ ամրացուող տեսակներու հաւաքածոյ

Հեռ.- 04-718444, Ֆաքս.- 04-718555

UNILEC
EXCLUSIVE DISTRIBUTOR

ՀԱՇՏՈՒԹԻՒՆԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՈՒԱԾ ԸԼԼԱՅ ՊԵՏՄԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԵՒ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՈՒ ՎՐԱՅ Կ'ԸՍԵ ԴՈԿՏ. Լ. ՄԱՐԱՇԷԼԵԱՆ

«Կլեմեդ Նիուզ Փրես» իր 23 Յուլիսի թիւով հրատարակած է Թիմ Ուիլլըթի «Ճշմարտութեան առաքելութեան վրայ գտնուող դասախոս» խորագիրով յօդուած մը, որ կը ներկայացնէ «Հայ - Թրքական Հաշտութեան Յանձնախումբ»-ի մասին դոկտ. Լեւոն Մարաշլեանի տեսակէտները:

Քալիֆորնիոյ «Կլեմեդ Քոմիյունիթի Քոլեճ»-ի մէջ պատմութեան դասախոս դոկտ. Լեւոն Մարաշլեան իր վերապահութիւնը յայտնած է այս ամսուան սկիզբը կազմուած «Հայ - Թրքական Հաշտութեան Յանձնախումբ»-ին մասին: «Այս յանձնախումբը արտաքինապէս յաւ կը թուի, սակայն միայն՝ արտաքինապէս: Հաշտեցումը միշտ զրական է, սակայն այս պարագային յանձնախումբը չի նպատակադրեր պատմութեան անկեղծ մօտեցում ցուցաբերել», ըսած է դոկտ. Լ. Մարաշլեան:

Թերթը յայտնած է, թէ երկու երկիրներէն տասը հօդինոց յանձնախումբը չի քննարկեր Հայկական Յեղափոխութեան ճշմարտութեան հարցը:

«Յեղափոխութիւնը պատմութեան վերաբերող հարց մը չէ, այլ կ'ազդէ ներկայ Հայաստանին: Հաշտութիւնը անհրաժեշտ եւ կարելի է, սակայն մնալուն ըլլալու համար պէտք է հիմնուած ըլլայ պատմական իրողութիւններուն եւ արարութեան սկզբունքներուն վրայ», ըսած է դոկտ. Լ. Մարաշլեան եւ՝ աւելցուցած: «Ժխտումը տակաւին շատ զօրաւոր է, սակայն սկսած է նահանջել, որովհետեւ ցեղասպանութեան փաստը ինքզինք կը պարտադրէ»:

Յօդուածագիրը նաեւ «Հայ - Թրքական Հաշտութեան Յանձնախումբ»-ին մասին մէջբերած է Հայ Դատի Յանձնախումբին ատենապետ Ալեքս Սարգսի կարծիքը, որ բաժնած է դոկտ. Լ. Մարաշլեանի տեսակէտները: «Օրինական ըլլալու համար յանձնախումբը պէտք է քննարկէ Հայկական Յեղափոխութեան հարցը: Ինծի եւ իմ կազմակերպութեանս համար յստակ է, որ այս յանձնախումբին կազմութիւնը կը պուզողիպի այնպիսի ժամանակի մը, երբ Թուրքիոյ կողմէ Հայկական Յեղափոխութեան ժխտումին դէմ հայերուն պայքարը մեծ յառաջիկայացը արժանազոր է»:

ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ «ԶՈՒԱՐԹՆՈՅ» ՕԴԱԿԱՅԱՆԻ ՄԻՋԱԴԵՊԻՆ ՄԱՍԻՆ

Նախապէս յայտնած էինք, թէ Հայաստանի քաղաքացիական օդանաւորութեան գլխաւոր վարչութեան «Զուարթնոց» միջազգային օդակայանի գլխաւոր տնօրէնը եւ յատուկ գննումի ծառայութեան ղեկավարը նկատողութիւն ստացած են վարչութեան պետին կողմէ, իսկ թիւիքին սպասարկող հերթափոխ պետը, տեղակալը եւ երեք պաշտօնեաներ աշխատանքէն արձակուած են՝ ուղեւորներուն հանդէպ սահմանուած աշխատանքային կարգը խախտած ըլլալու պատճառով:

«Ազգ» օրաթերթը դէպքին մասին մանրամասնութիւններ հաղորդելով՝ կը յայտնէ, թէ գննման ծառայութեան աշխատակիցները Փարիզ մեկնող երեք ուղեւորներու պարտադրած են 40 տուփ ծխախոտ տեղափոխել Լոս Անճելես եւ յանձնել իրենց կողմէ նշուած Հասցեատիրոջ: Անոնք սպառնացած են անոնց ճամբարութեան արգելք ըլլալ, եթէ չզօրժողըն իրեն իրենց պահանջները: Ուղեւորներէն մէկը՝ ամերիկահայ քաղաքացի մը, աւելորդ քաջութեանէ խուսափելու համար ստիպուած համաձայնած է: Ուղեւորը Փարիզի օդակայանին մէջ, երբ կը ստիպուի տուրք վճարել ծխախոտներուն համար, սեղ հասնելէ ետք բողբոջաբեր կը յղէ Հայաստանի քաղաքացիական օդանաւորութեան գլխաւոր վարչութեան:

Այս դէպքէն բացի, վարչութիւնը այլ հեռաձայններ եւ բողբոջներ ստացած է օդակայանին մէջ պատահած անհոգութիւններուն եւ անօրինական դէպքերուն պատճառով:

Հայաստանի քաղաքացիական օդանաւորութեան գլխաւոր վարչութեան պետ Յովհաննէս Երիցեան նշած է, թէ վերջերս վարչութիւնը աւելի մօտէն կը հետեւի օդակայանի անցուղաձեւերուն. ան յայտնած է, թէ զանազան թերացումներու պատճառով 430 հոգի արձակուած է գործէ:

ՆԻՒ ԶՐԳԻՒ

Հ. ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Նիւ Զրգիի Ս. Վարդանանց եկեղեցւոյ մէջ 3 Յուլիսին տեղի ունեցած է Հրաչ Տասնապետեանի յիշատակին նուիրուած հանդիսութիւն մը, որ կազմակերպուած էր Հ. Յ. Դ. շրջանի «Դրօ» Կոմիտէի եւ Համազգայինի Նիւ Զրգիի մասնաճիւղի կողմէ:

Հանդիսութեան ընթացքին արժեւորուած են Հրաչ Տասնապետեանի կեանքն ու գործունէութիւնը: Խօսք առած է Հ. Յ. Դ. Բիւրոյի անդամ Վիգէն Յովսէփեան, որ ներկայացուցաւ Հ. Տասնապետեանի չորս տասնամեակներու վրայ երկարող ազգային ու կուսակցական մարզերու մէջ կատարած իրադրութիւնները: Հանդիսութեան աւարտին տեղի ունեցած է հոգեճաշ:

«ԱՉԳԱԿ»-Ի ՀԵՌԱՋԱՅԻ ԹԻՒԵՐԸ
«ԱՉԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել
հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

ՀՀՇԻ ԿԵԴՐՈՆՆԵՐԷՆ ՄԷԿՈՒՆ ՄԷՋ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՁԻՆԱՄԹԵՐՔ ԿԸ ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒԻ

Երկուշաբթի, 23 Յուլիսին, Հայաստանի ազգային անվտանգութեան նախարարութիւնը, երկար հետախուզումներէ ետք, վաճաճոր քաղաքի «Միասնիկեան» փողոցի թիւ 54 տան նկուղէն եւ ՀՀՇԻ նոյն շրջանի գրասենեակէն յայտնաբերեց եւ գրաւեց մեծ քանակութեամբ գինամթերք:

Ձինապահեստին մէջ կը գտնուէին մեծ քանակութեամբ եւ գանազան տեսակի պալթուցիկներ՝ իրենց յարակից մասերով, հրազէններ, 5,000 փամփուշտ եւ այլն:

Նախարարութեան նախնական տուեալներով, ՀՀՇԻ այս շրջանի ղեկավար Աշոտ Մանուկեան, որ նաեւ Գուգարքի անտառային տնտեսութեան փոխ տնօրէնն է, չարաշահելով յիշեալ տանտիրուհիին վստահութիւնը, գինամթերքի մեծ մասը պահ դրած է անոր տան նկուղին մէջ:

Աշոտ Մանուկեան ձերբակալուեցաւ եւ օրինապահ մարմինները քննութիւնը բացին դէպքին շուրջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԱԿԻ ՕՐԸ՝ 28 ՅՈՒՆՈՒԱՐԻՆ

23 Յուլիսին զումարուած Հայաստանի Ազգային Ժողովի արտահերթ նստաշրջանին քննարկուած եւ ընդունուած են «Հայաստանի տօներու եւ յիշատակի օրերու մասին» օրէնքին վերաբերեալ Հայաստանի նախագահին առաքելութիւնները:

Ըստ այս որոշման, այսուհետեւ Բանակի օրը պիտի նշուի ոչ թէ 20 Սեպտեմբերին, այլ՝ Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան ստեղծման օրը՝ 28 Յունուարին:

Նախագահին առաքելութիւնները ներկայացնող Հայաստանի պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեան նշած էր, որ 28 Յունուար 1992ին ստեղծուած է Հայաստանի պաշտպանութեան նախարարութիւնը, եւ նախարար Վազգէն Սարգսեան ստորագրած է բանակի կառուցուածքին վերաբերեալ առաջին հրամանը:

«20 Սեպտեմբերին ներքին գործոց նախարարութեան մէջ ստեղծուած է գունդ մը, որ կարելորդ ներդրում ունեցած է հայկական բանակի կազմաւորման գործին մէջ, բայց 28 Յունուարէն ետք է, որ զինուորներն ու սպաները զինուորական երզման կարելիութիւն, իսկ հրամանատարները՝ մարտական հրաման տալու իրաւունք ունեցած են», ըսած է Ս. Սարգսեան:

Նախարարը նաեւ ըսած է, որ Բանակի օրը 28 Յունուարին նշելու ամրոյժ պիտեալ ուժերուն հաստատուն տեսակէտն է:

ՆՈՐ ԾՔԱՆՇԱՆՆԵՐ

Երկուշաբթի, 23 Յուլիսին, Հայաստանի պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանի հրամանով հաստատուած են «Անդրանիկ Օգանեան», «Դրաստամատ Կանայեան» եւ «Գարեգին Նժդեհ» շքանշանները՝ յիշեալ ազգային հերոսներուն յիշատակը յաւերժացնելու նպատակով:

Նախարարութիւնը հաղորդած է, որ այս շքանշաններով պիտի պարգեւատրուին այն զինուորականները, որոնք զինուած ուժերու մարտական պատրաստութեան, զինուորական, կրթական համակարգի զարգացման եւ երիտասարդ սերունդին զինուորական - հայրենասիրական դաստիարակութեան մարզին մէջ նկատառելի ներդրումներ կը կատարեն:

Այս շքանշաններուն պիտի արժանանան նաեւ զինուորական ծառայութեան ընթացքին արիւթիւնը, իրապիտութիւնը եւ կազմակերպչական հմտութիւնը զրուսւորած սպաներն ու ենթասպաները, հայրենիքի սահմանները պաշտպանող զինուորները, զինուորներու կեանքի պաշտպանութեան, հայկական բանակի ամրապնդման մէջ զգալի աւանդ ունեցող անհատները:

Հայ ազգային ազատագրական շարժման ականաւոր գործիչներու յիշատակը յաւերժացնող շքանշանները պիտի նշուին օգնական պաշտպանութեան նախարարին հրամանով:

ՄԱՐԴԱՅԻՆ ԻՐԱՒԱՆՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ ԿԸ ՔՆՆԱՐԿԷ ԲԱՆԱԿԻՆ ԱՌՆՉՈՒՈՂ ՀԱՐՑԵՐ

Վերջերս, Հայաստանի նախագահին առնթեր մարդկային իրաւանց պաշտպանութեան հարցերու յանձնախումբին մէջ քննարկուող հարցերուն զգալի մասը կ'առնչուի բանակին:

Այս գծով պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեան Երկուշաբթի, 23 Յուլիսին ըսաւ, թէ ակնարկուած քննարկումներուն մէջ ինք միտում կը նկատէ, որովհետեւ այդ յանձնախումբի նիստերուն ոչ մէջ նոր փաստ ներկայացուած է եւ ընդհանրապէս քննարկուող նիւթերը 1998 - 99 տարիներու պատահարներուն կը վերաբերին:

«Յանձնախումբը կարծես թէ տարեթիւր չփոխելով, այդ դէպքերը վերագրում է այսօրուան», շեշտեց նախարարը, որուն համաձայն, բանակին մէջ տեղի ունեցած սպանութիւններու եւ զոհերու թիւը անցեալ տարի բուսական նուազած է 1999ի համեմատութեամբ, իսկ այս տարի 2000ի համեմատութեամբ՝ 20 առ հարիւրով: Միաժամանակ նախարարը նկատել տուաւ, թէ այսօր եւս թերութիւններ կան բանակին մէջ, եւ այդ թերութիւններուն վերացման համար լուրջ աշխատանքներ կը տարուին:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԱԶԱՐԹՈՆԸ՝ ԶԱՒԱՔԻ ՄԷՋ

ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՐԳԻ ՏՕՆ՝ ՎԱՀԱՆ ՏԵՐԵԱՆԻ ԾՆՆԱՎԱՅՐԻՆ ՄԷՋ

35 տարի առաջ խումբ մը մտաւորականներ որոշեցին հայ բանաստեղծ, գրական - հասարակական գործիչ Վահան Տէրեանի (Վահան Տէր Գրիգորեան՝ 1885 - 1920) ծննդավայրին՝ Պոկտանովկայի (ներկայիս՝ Նիւնոմիւնտա) շրջանի Գանձա գիւղին մէջ կայացնել Վահան Տէրեանի բանաստեղծութեան օր: Յաջորդող տարիներուն այս հանդիսութիւնը աւելի ընդարձակուեցաւ եւ բանաստեղծին ծննդավայր գիւղը՝ Գանձան այդ օրը սկսաւ խնդրելի Երեւանէն, Թիֆլիսէն, Մոսկուայէն եւ Սփիւռքէն ժամանող հայորդիներով:

Այս տարի եւս, 22 Յուլիսին, հազարաւոր մարդոցմով լեցուած էր Վահան Տէրեանի հայրենական տունը, որ տուն - թանգարանի վերածուած է, եկեղեցւոյ բակը, ուր թաղուած են Տէրեանի նախնիները եւ անոր զուտորը: 1978 թուականին այս գերեզմանին վրայ տեղադրուած է յուշաքանդակ մը, իսկ 1990ին աճող կողքին գետեղուած է Հայկական Յեղափոխութեան գոհերուն նուիրուած յուշաքար մը: Այս տարի անոնց քով հաստատուեցաւ խաչքար մը, որուն նախաձեռնողն ու հեղինակն է Ալյոնա Ջանաժեան:

22 Յուլիսին խաչքարին բացումը կատարեցին Նիւնոմիւնտայի շրջանային վարչութեան պետ Ռաֆիկ Արզումանեան եւ շրջանին մէջ կայացող «Երեւանի մշակոյթի օրեր» տօնին համար Զաւաք դառնող Երեւանի պատուիրակութեան նախագահ Երեւանի քաղաքապետ Ռոպէրթ Նազարեան: Երեւանի պատուիրակութիւնը այցելեց Տէրեանի տուն - թանգարանը, եւ մատենին մէջ քաղաքապետ արձանագրեց, թէ հպատակութեամբ դուրս կու գայ Տէրեանի տուն - թանգարանէն եւ թէ հպարտ է Տէրեանի հայրենակիցը ըլլալուն համար: «Յաւերժ փառք Գանձա բնակավայրի ամէնէն մեծ հայուն», գրեց ան:

Հայ գրողներու պատուիրակութեան անդամ Բանաստեղծ Յարութիւն Պէրպէրեան (Քանաւո) ըսաւ, թէ այս իր առաջին այցելութիւնն է շրջան, եւ թէ ինչ որ յսած ու պատկերացուցած է, իրականութեամբ տեսած է Զաւաքի մէջ:

Ապա հիւրերն ու ներկաները դիմացի սարահարթին վրայ տօնեցին Տէրեանական բանաստեղծութեան օրը, որ այս անգամ կայացաւ «Երեւանի մշակոյթի օրեր»-ու ծիրին մէջ:

Վահան Տէրեանի մասին խօսեցան Երեւանի քաղաքապետ Ռոպէրթ Նազարեան, «Զաւաք» Հայրենակցական Միութեան նախագահ, «Հայկական Հանրապետութեան» գլխաւոր խմբագիր տնօրէն Յովհաննէս Այվազեան, Վրաստանի Հայ Գրողներու Միութեան նախագահ Ժորա Մնթիսեան, բանաստեղծներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՌՈՊԵՐԹ ՔՈԶԱՐԵԱՆ

Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ ԾՔԱՆՇԱՆՈՎ ԿԸ ՊԱՐԳԵՒԱՐԷ

«ԼԱ ՍԳԱԼԱ»-Ի ԳԼԽԱՒՈՐ ԽՄԲԱՎԱՐ ՌԻՔԱՐՏՕ ՄՈՒԹԻՆ

Հայաստանի մէջ բրիտանական պիտակաւ 1700ամեակին տօնահանդէսներու միջոցով, 23 Յուլիսին Հայաստան հասնող նախագահի փառաօթնի «Լա Սքալա» օֆերային թատրոնի համերգը Հայաստանի մշակութային կենտրոնի մէջ իրադարձութիւն նկատուելով: Նախագահը ըսաւ, որ այս նուազախումբը, երգչախումբը եւ մենակատարները, Ռիքարտո Մուրիլի ղեկավարութեամբ:

Հայաստանի նախագահին մամուլը գրասենեակին հաղորդած տեղեկութիւններուն համաձայն, 23 Յուլիսին Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան հրամանագրեց Հայաստանի մշակութային կենտրոնի մէջ ըրիստոնէութեան պիտակաւ կրօն հռչակման 1700ամեակը: Հանդիսութեան ընթացքին նշուած է, թէ իտալիոյ Ռաւեննա քաղաքին մէջ աւանդաբար կազմակերպուող երաժշտական խմբակները, որ 2002 թուականի պետական շնորհակալութեամբ հարգին լուծման համար:

ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՅԱՆՑԻ «ՌԻՆՏՈՂ»

ԾՐԱԳԻՐԻ ՀԱՅԵՐԷՆ ՏԱՐԵՐԱԿ

Հայաստանի արդիւնաբերութեան եւ առեւտուրի փոխ նախարար Արմէն Գրիգորեանի համաձայն, մեծ հաւանականութիւններ կան, որ շուտով համակարգչային ցանցի «Ուլիմոլ» ծրագրի ծրագրի ծրագրէն տարբերակը հրապարակուի:

Նոյնիսկ կը նախատեսուի, որ 2002 թուականի պետական շնորհակալութեամբ հարգին լուծման համար:

Ըստ փոխ նախարարին, այս ծրագրի իրագործումը պիտի ղեկարգեն երկրին մէջ համակարգիչի օգտուելը եւ անոր զանգուածային գործածութիւնը:

տեղծները Համալսելի կարճիկեան, Ալլա Արմատոն, Համալսելի Գրիգորեան, գրականագէտ Սուրէն Դանիէլեան, Վահան Տէրեանի տուն - թանգարանի տնօրէն Վաղինակ Ղազարեան եւ ուրիշներ:

Հանդիսութիւնը վերջ գտաւ համերգով, իսկ ժողովրդային տօնախմբութիւնը շարունակուեցաւ մինչեւ ուշ գիշեր:

ԶԱՒԱՔ ԻՐ ՅԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐԲԸ ԿԸ ՄԵՏՈՒՅԷ ԱՇՈՒՂ ԶԻՒՄՆԻԻ ՅԻՇԱՍԱԿԻՆ

Զաւաք իր յարգանքի տուրքը մատուցեց իր գաւալին՝ հայ աշուղ, ժողովրդային երգիչ Զիւանի, որ ծնած է Ախալքալաքի կարծախ գիւղը:

«Երեւանի մշակոյթի օրեր» տօնախմբութեան ծիրին մէջ, Ախալքալաքի շրջանային Մշակոյթի Տան մէջ կայացաւ Աշուղ Զիւանի ծննդեան 155ամեակը: Ներկայ էին Երեւանի պատուիրակութիւնը, որոնք աղ ու հացով դիմաւորուեցան Վրաստանի նախագահին ներկայացուցիչին՝ Կիկա Պարամիճի կողմէ, հիւրեր՝ Երեւանէն, Թիֆլիսէն, Գլխաւորէն, Վանաձորէն, մօտակայ գիւղերէն եւ մեծ թիւով տեղացիներ:

Երոյթ ունեցաւ Վրաստանի նախագահի գործերու համակարգող խոշտարիան, որ նշեց, թէ Զիւանի իր անձով եւ գործով ամուր կապած է հայերու եւ վրացիներու կապերը:

Ապա խօսք տուին Երեւանի պատուիրակութեան նախագահ, քաղաքապետ Ռոպէրթ Նազարեան, Հայաստանի նախագահի ռազմական խորհրդական հրամանատար - գնդապետ Գուրգէն Դարիւրյան, արձակագիր Զօրի Բալայեան, Հայաստանի կառավարութեան ներկայացուցիչ Ստեփան Մարգարեան եւ ուրիշներ:

Երկու ժողովուրդներու յարաբերութեան մասին խօսեցաւ Կիկա Պարամիճէն: Ան Երեւանի քաղաքապետին նուիրեց հայ վարպետներու կողմէ պատրաստուած հնադարեան սուր մը: Հանդիսութիւնը վերջ գտաւ մեծ համերգով:

Հանդիսութեան աւարտին Կիկա Պարամիճէն վրաստանի նախագահ Խաւարտ Եւաքարեանի եւ շրջանի ղեկավարութեան կողմէ շնորհակալութեան վայրէջք Երեւանի պատուիրակութեան, որ իր այցելութեամբ հաստատուեց քաղաքի պատուիրակութեան պատին վրայ: «Զիւանի, Տէրեանի տունը մենք միշտ կը նշենք, սակայն այսօր անոնք նոր իմաստ, նոր բովանդակութիւն ստացան. Երեւանի պատուիրակութիւնը եկած է նաեւ գործնական օգնութիւն ցուցաբերելու իր հայրենակիցներուն», ըսաւ ան:

տական այս փառաօթն սկսած է 22 Յուլիսին եւ կ'աւարտի 24 Յուլիսին Պոկտով մէջ: Փառաօթնի «Բարեկամութեան» խորագիրը կրող ծրագրեր, որ այս յատարանի մէջ ըրիստոնէութեան պիտակաւ կրօն հռչակ

Հիբանալուսնի Մամուլ

ՍՖԵՅՐԻ ՀՈՎՈՒԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՐԲԸ

Յառաջիկայ շաբաթ սպասուող մարտիններու պատրիարք Նսարայի Սֆէյրի Շուֆ եւ Ժեզգիւն տալիք այցելութիւնը ստացաւ հովուապետական բնոյթ: Բայց անիկա բնականաբար այդպիսին չէ, եւ եթէ այդպիսին ըլլար, կարելի էր զայն կատարել աւելի ուշ՝ մեկնելով այն տրամաբանութեան, որ շատ քիչ ժամանակ անցաւ Շուֆի շրջաններէն գաղթած ժողովուրդին վերադարձին:

Այցելութեան քաղաքական բնոյթը աւելի տիրական կը թուի ըլլալ, եւ երեւի ասիկա մարտիններու պատրիարքին դէպի Շուֆ կատարած առաջին այցելութիւնն է, որ քաղաքական բնոյթ կը գրեցնու: Սակայն այս առնչութեամբ գոյութիւն ունին երկու նախընթացներ, որոնք առնչութեամբ ընկերային պարտականութիւններու հետ:

Այս այցելութեան ժամկէտին բացատրութիւնը այն է, որ պատրիարք Սֆէյր այլեւս չի գտար, թէ գոյութիւն չունի հիմնական քաղաքական տարակարծութիւն իր եւ Ընկերվար Յառաջդիմական կուսակցութեան ղեկավար Ռաիլի ժողովարքի հետ, ո՛չ տեղական մակարդակի վրայ, ո՛չ շրջանային մակարդակի վրայ, ո՛չ գաղթականներու հարցին առնչութեամբ, որոնց 90 առ հարիւր լուծուած է արդէն, եւ ո՛չ ալ իր բանաձեւութեամբ լարարարութիւններու մակարդակին վրայ, այնպէս զոր պատրիարք Սֆէյր երեսփոխան Ռաիլի ժողովարքի հետ շատ մը յստակ հանդիպման կէտեր ունեցաւ Հիբանալի մէջ սուրիական գերկայութեան առնչութեամբ, հակառակ անոր որ կան նաեւ կարգ մը տարակարծութիւններ իրենց տեսակէտներուն միջեւ:

Ասկէ զատ պէտք է նկատի առնել նաեւ Պքերքէի եւ Մուխարաբի ունեցած սոսիկութեան փորձերը առնուազն Երեւանի մակարդակի վրայ: Այս ձեւով պատմական իրադարձութիւն մը պիտի ըլլալ նախագահ Լաւոնի, պատրիարք Սֆէյրի եւ Ռաիլի ժողովարքի ներկայութիւնը Պքերքէի Լուսինի եւ թերեւս ալ միեւնոյն ժամանակ Մուխարաբի մէջ:

Իսկ ինչ կը վերաբերի Ժեզգիւնի, ապա ըստ կարգ մը տեղեկութիւններու, պատրիարքին այդտեղ այցելութիւնը կապուած է շրջանին մէջ ապահովական եւ քաղաքական կայունութեան հետ:

Հակառակ խորհրդարանի նախագահ Նեպիհ Պրորիի պատրիարք Սֆէյրին լոյսած ազատագրութեան հարաւայցելութեան հրաւերին, եւ հակառակ անոր դարձեալ, որ այս շրջանին եղած պաշտօնական եւ նախագահական այցելութիւններուն՝ ազատագրութեան ետք, այսուհանդերձ պատրիարք Սֆէյր կը շարունակէ իր հիմնական վերապահութիւնները ունենալ այդ շրջանին մէջ իսրայէլեան ուժերու քաշուելէն ետք ստեղծուած կացութեան գծով:

ՕՄԱՐ ՀԱՊԱՆԺԱՐ

«Անուար»

ՆԱԽԱՐԱՐ ՄԻՇԷԼ ՄՈՒՍԱՄ ԼԻԲԱՆԱՆԻ ԴԻՄԱԳՐԱԻԱԾ ԿԵՆՍՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Լիբանանեան «Նահար» թերթի երիտասարդական «Նահար Ճապապ» յանձնարարը իր երեքշաբթի, 24 Յուլիսի թիւով Լիբանանի կենսոլորտի նախարար Միշէլ Մուսայի հետ ունեցած երկարատեւ հարցազրոյց մը՝ նախարարութեան դիմագրաւած հիմնահարցերուն եւ Լիբանանի մէջ գոյութիւն ունեցող կոնֆլիկտ հարցերուն վերաբերեալ:

Հարցազրոյցն կու տանք հատուածներ:

ՀԱՐՑՈՒՄ.- Ի՞նչպէս կը նկարագրէք Լիբանանի ալժմու կենսոլորտի վիճակը:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Ներկայիս կան բազմաթիւ կենսոլորտային հարցեր. սակայն մենք կ'աշխատենք բարելաւել վիճակը: Սկսածք յուրջ քայլեր առնել կենսոլորտի նախարարութեան կառուցումի մարապնդման եւ կենսոլորտային մեծ հարցերու լուծման ուղղութեամբ: Համապարօնակցելով այս հարցերուն հետ կապ ունեցող ուրիշ նախարարութիւններու եւ հաստատութիւններու հետ, աշխատանքը գործնականացնելու միտող միացեալ յանձնարարութիւններու միջոցով, սպասելով, որ կենսոլորտի նախարարութեան տրուին կենսոլորտի հարցերու հետ կապուած որոշումներու իրադրութեան յաւելեալ իրաւասութիւններ եւ նիւթական աւելի մեծ կարելիութիւններ:

Հ.- Կենսոլորտի նախարարութիւնը ի՞նչ առաջնահերթութիւններ ունի բազմաթիւ կոնֆլիկտ հարցերու առկայութեան:

Պ.- Երբ նախարար նշանակուեցայ, ճշդեցի առաջնահերթութիւնները, ինչպէս նաեւ կեդրոնացայ ամուր հիմերու վրայ գրուած աշխատանքի մը վրայ՝ լաւ կազմակերպական կառույցի եւ կենսոլորտի պաշտպանութեան նոր օրէնքի մը օրէնքով, օրէնքով, որ ներկայիս ուղարկուած է խորհրդարան:

Այս բոլորը նախարարութեան համար լուրջ հիմք մը կը ստեղծեն բոլոր հարցերու լուծման համար: Չմոռնանք Լիբանանի դի-

մադրաւած կոնֆլիկտ հարցերը, ինչպէս՝ թափօնները, կոյուղիի կեդրոններու հարցը, օդի ապահովումը, քարահանքերը եւ ծառատնկումը. մենք կ'աշխատենք այս բոլոր հարցերու լուծման վրայ:

Հ.- Ի՞նչ եւ կենսոլորտի իրավիճակի բարելաւման համար ձեր առումը միջոցառումները: Կենսոլորտային գետնի վրայ ու շրջանները ամէնէն գէշ պատկերը կը ներկայացնեն:

Պ.- Բոլոր շրջաններն ալ կենսոլորտային հարցեր կը դիմագրուեն, սակայն իւրաքանչիւր շրջան կը տարբերի միւսէն: Այսուհանդերձ հարցերը ընդհանուր են. շրջանները կը հաւատարման օդի, լուրջի ջուրի եւ ջուրի ապահովութեամբ... Իսկ լուծումը երկար նիւթ մըն է եւ հարցերը՝ կոնֆլիկտ. կը փորձենք բոլոր հարցերն ալ լուծել:

Կենսոլորտի հարցը շատ կարեւոր նիւթ մըն է, մանաւանդ որ Լիբանան կը յենի իր բնութեան վրայ՝ գրօսաշրջիկները ներգրաւելու համար: Կը կարծեմ, որ պէտք է կազմակերպել աշխատանքը եւ ծրագրաւորել գալիս փրկուելու համար կենսոլորտի հարցերէն: Միեւնոյն ժամանակ կենսոլորտի իրավիճակին բարելաւումը նախարարութեանն է կը պահանջէ ունենալ կարելիութիւններ՝ հարցերը լուծելու, ապիկա կենսադրել նաեւ համապարօնակցութիւն միւս նախարարութիւններուն հետ, ինչպէս նաեւ բնութեան մէջ ինքնագործակցութեան ստեղծում՝ կենսոլորտի մաքրութեան պահպանման գծով:

Տարակոյտ չկայ, որ կենսոլորտի հարցերը ապագային աւելի կարեւորութիւն պիտի ստանան համաշխարհայինացումի, առեւտրական բաց շուկաներու քաղաքականութեան եւ ծարտարարութեան, գիւղատնտեսութեան եւ գրօսաշրջութեան մէջ մրցակցութեան յոյսին տակ:

Ասոր համար ալ բոլոր պետութիւնները պարտաւոր են բարելաւել իրենց կենսոլոր-

տային պայմանները:

* * *

Հ.- Լիբանան ներկայիս կը դիմագրուան ապագային հարց. գոյութիւն ունի անտառակտուր վերակառուծման ծրագիր, մանաւանդ որ գոյութիւն ունեցող արգելոցները թիչ են:

Պ.- Մենք բնական արգելոցներ չունենք, սակայն իրերաջողող կառավարութիւնները նպաստեցին անոնցմէ ինչին ստեղծման, այն յոյսով, որ անոնց թիւը կ'աւելնայ: Ներկայիս կարելիութիւն կայ ստեղծելու բնական արգելոց մը՝ բնական արգելոցներուն յատուկ օրէնքներուն ճշգրտ չափանիշներուն ծիրին մէջ:

Ինչ կը վերաբերի անտառանկման, Լիբանանի մէջ կանաչապատ տարածութիւնները նուազած են իրանանցիներուն ապրած արհաւիրքներուն, անտարբերութեան, հրկիզումներուն եւ գիւղատնտեսութեան կարեւորութիւն չտալուն պատճառով:

Ներկայիս կառավարութիւնը հնգամեայ ծրագիր մը մշակած է Լիբանանի անտառապատման նպատակով, իսկ աշխատանքի մարտավարութիւնը պիտի մշակուի նախարարութեան կողմէ՝ այս հարցին հետ առնչուող կողմերուն եւ կազմակերպութիւններուն հետ համապարօնակցաբար:

Հ.- Այսօր ամէնէն շատ արժարժուող հարցը մագլորով բանող շարժակներ ունեցող ինքնաշարժներու տազնային է. որոնք եւն ալ միջոցառումները, որոնք ուղղակի լեցան այս հարցին լուծման օդի ապահովման գծով:

Պ.- Ոչ մէկը կ'արգելակէ մեր աշխատանքը, սակայն բազմաթիւ օրինազանց ինքնաշարժներ կը շարունակեն իրենց աշխատանքը: Այս առնչութեամբ նախարարաց խորհուրդը ընդունած էր որոշում մը՝ այս հարցին լուծման առնչութեամբ, սակայն վեց ամիսով ուշացաւ անոր իրադրութեան մէջ: Այսուհանդերձ մենք կը գտնուենք վերջնական լուծման ճամբուն վրայ:


ՇԱՐՇԵՔ 15,000 ՏՈԼԱՐԻ ԱՐԺԷՔԱԻՈՐ ՆՈՒԷՐՆԵՐ


Win up to
\$15,000 in prizes

Peugeot 206
Trip to Cyprus for 2 persons (6 nights)
2 FUJITSU air condition
2 General Electric washing machine
Sony HI FI DX5
Philips DVD 711 with zoom
Panasonic TV 21 inch
Sony TV 21 inch
Continental oven



Peugeot 206 ինքնաշարժ մը
2 անձի Կիպրոս ճամբորդութիւն (6 գիշեր)
2FUJITSU էր քոնտիսիոնէ
2 General Electric լուացքի մեքենայ
Sony հայ ֆայ Dx5
Philips DVD 711 զոււնով
Panasonic հեռատեսիլ 21 ինչ
Sony հեռատեսիլ 21 ինչ
Ընթերցանութիւն փուռ





Կնոջական

ՄԵՐ ԶԱՒԱԿՆԵՐԸ ԵՒ ՄԵՆԵ

ԱՄԱՌՆԱՅԻՆ ԶԲԱՂՈՒՄՆԵՐ

Լիրանա- նի մէջ ամառնային արձակուրդը քիչ մը շատ երկար է եւ մեր երեխաները հա- կամէտ են ձանձրանալու:

Անոնք օրուան ըն- թացքին յա- ճախ կը զօգուհին, որ կը ձանձրա- նան, ընելիք չունին եւ, ընականա- րար, իրենք գիրենք կը մղեն անխմատ եւ երբեմն ալ վատնգաւոր գրադու- ներուն:

Անկախ դէպի գիւղ շարժական պտոյտէն, ան- կախ ծովէն, արդեօք կ'ան ոչ ծախսալից գրադուներ մեր երեխաներուն համար: Փորձառու մայրեր հետեւ- եալ զաղափարները յղացան:

- Երեխան արձանագրել ամառնային դպրոց-խա- դավայր մը:
- Պատանիները գործի ղրկել իրենց հօրը կամ մէկ ազգականին հետ:
- Պարտէզի յարմարութիւն չունենալու պարագա- յին, մեծ թաղարներ գնել եւ երեխային հետ հունտեր ցանել ու անոնց խնամքը վստահիլ փոքրիկին:
- Աղջնակներու համար գունաւոր հլուններ եւ թե- լեր գնել եւ անոնց սորվեցնել գարդեղէններ (մանեակ, ապարանջան...) պատրաստել:
- Պատանիին ատողձագործի տարրական գործիք- ներ տրամադրել եւ սորվեցնել իրեն շինել, ինչպէս, օրինակ, փոքր քրոջը խաղալիքները ամփոփելու արկղ մը, մեծ հայրիկին աթոռակ մը, եւ այլն:
- Պատանիներուն հետ պատրաստել կաւով կամ ալիւրով պատրաստուած իրեր, գորս կարելի է փու- ուին մէջ եփել, կարծրացնել եւ ապա ներկել:



- Ընթերցումի ժամ ճշդիլ եւ երեխային հետ կար- դալ մէկ-երկու էջ եւ ապա զրուցել:
- Օրական ժամ մը դասի տրամադրել՝ անոր քով ներկայութիւն ըլլալով եւ ի հարկին օգնելով անոր:
- Տան մէջ խանդարուած իր մը (ժամացոյց, փոքր ձայնասփռու, հեռախօս) երեխային տալ եւ արտօնել, որ գայն քակէ ու «նորոգէ»...
- Երեխաներուն հետ հաւաքական կարկանդակ մը կամ աղցան մը պատրաստել՝ իւրաքանչիւրին գործ մը վստահելով:
- Ծննդին կամ թաղին պատկերներուն հետ դիմակա- հանդէս մը պատրաստել եւ լաւագոյն ծպտուողը ընտրել:
- Պոփզերէն հաւաքուած ուսուցիչներով պատկերներ կազմել, յուսանկարի շրջանակներ գարդարել կամ մա- մային գարդեղէններուն համար տուփ մը շինել:
- Տան մէջ ստասուն մը բերել եւ անոր խնամքին մէկ մասը վստահիլ փոքրիկին:

Մեր երեխաները պէտք ունին ուղղութիւն տուո- ղի, գիրենք լսողի եւ իրենց հետ գրադողի:

Կարելի չէ ըսել՝ գնա՛ համակարգիչով գրադէ, կամ գնա՛ գիրք կարդա՛ կամ ընկերովդ տունը գնա՛ եւ զիս հանգիստ ձգէ: Եթէ կ'ուզենք, որ մեր երեխաները իրենց տարիքին համապատասխան գրադում գտնեն եւ հրաժարին վնասակար ու վտանգաւոր խաղերէ, պէտք է որ օրական քանի մը ժամ տրամադրենք անոնց եւ համընթացեալ ու սիրալիկ խօսակցու- թեամբ պատասխանենք անոնց հարցումներուն եւ իրերը չստեղծենք այն տպաւորութիւնը, թէ անոնց ներկայութիւնը կը խանգարէ մեր հանգստութիւնը կամ կը յոգնեցնէ մեզ:

ՀԱՐՑԱՐԱՆ

ՀԱԿԱՄԷ՝Տ ԷՔ ԴՈՒՔ ԶԵՉ ՄԻՇՏ ՎԵՐՋԻՆԸ ԴԱՍԵԼՈՒ

